

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

24 դեկտեմբերի 2018թ.
ք. Երևան

N 177-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՈՒՄԲ ԵՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՈՎ ՎԱՐՉԱԿԱՆ
ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քննարկելով քաղաքացի Հովհաննես Մարգարյանի՝ նախաձեռնող խումբ և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ գրանցելու վերաբերյալ 19.12.2018թ. դիմումը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց.

Քաղաքացի Հովհաննես Մարգարյանը 2018 թվականի դեկտեմբերի 19-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացրել դիմում՝ խնդրելով գրանցել նախաձեռնող խմբին և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչին, ինչպես նաև նախաձեռնող խմբի անդամներին տրամադրել սահմանված ձևի վկայականներ:

Դիմումին կից ներկայացված են՝ նախաձեռնող խումբ կազմավորելու և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ նշանակելու մասին որոշումներ, որոշումները ստորագրած քաղաքացիների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները և Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը՝ էլեկտրոնային և թղթային տարբերակով: Դիմումում նշված է նաև նախաձեռնող խմբի էլեկտրոնային հասցեն:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 24-ի ժամը 17:00-ի նիստին ներկայացած դիմումատու Հովհաննես Մարգարյանը ներկայացրել է դիմում՝ իր 2018 թվականի դեկտեմբերի 19-ի նախաձեռնող խմբին և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչին գրանցելու վերաբերյալ դիմումից հրաժարվելու մասին:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունները) և եզրահանգումը

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն՝

«1. Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե՝

բ) դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից.»:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի

1-ին մասի բ) կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Հովհաննես Մարգարյանի՝ նախաձեռնող խումբ և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ գրանցելու վերաբերյալ 19.12.2018թ. դիմումով վարչական վարույթը կարճել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելու պահից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. Մուկուչյան